ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15 հոկտեմբերի, 2014թ. ք. Երևան

«ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում Արարատի մարզի ՔՀԿ-ների հետ» թեմայով

Արարատում կայացավ Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում՝ Արարատի մարզի ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ: Այն կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ Եվրոմիության կողմից՝ ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Քննարկման ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի գործադիր տնօրեն, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի համակարգող/դրամաշնորհների պատասխանատու Արտակ Մարիբեկյանը, Հակակոռուպցիոն ռազմավարության աշխատանքային խմբի քարտուղարը Մարիամ Գալստյանը: Վերջինս նաև ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակած 2014-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը: Ծրագրի փորձագետների կողմից ներկայացվեց Հակակոռուպցիոն բազմաֆունկցիոնալ անկախ մարմնի ստեղծման և ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավորությունը Հայաստանում: Նախատեսված ներկայացումներից հետո ծավալվեցին քննարկումներ, տեղի ունեցավ կարծիքների փոխանակում, ինչի արդյունքում ներկաները հանդես եկան նաև առաջարկություններով:

Այսպես, «Հրեշտակ» ՀԿ նախագահ Իզբելլա Աղեկյանի կարծիքով՝ անհրաժեշտ է հակակոռուպցիոն ռազմավարությունում որպես կոռուպցիայի դեմ պայքարի թիրախային ոլորտ ներգրավվել սոցիալական ապահովության ոլորտը, որովհետև բացի առողջապահական, կրթական և մյուս ոլորտներից, անապահով խավը ավելի մոտ կանգնած է սոցիալական ոլորտին, որտեղից պետք է սկսել պայքարը: ՔՀԿ մեկ այլ ներկայացուցչի կարծիքով՝ ճիշտ միջոց է համատեղ պայքարել նաև մեծ կապիտալի տեր մարդկանց ունեցվածքը պարզելու ուղղությամբ և քրեականացնել ապօրինի հարստացումը Հայաստանում:

«Կանաչներ» ՀԿ-ի նախագահ Ալինա Լալայանը կարևորելով հակակոռուպցիոն պայքարում ՀԿ-ների մասնակցությունը, առաջարկեց, որ անաչառ ՀԿ-ներ ներգրավվեն հակակոռուպցիոն պայքարին ու այդ ՀԿ-ները թույլ չտան արտաքին ճնշում իրենց գործունեության նկատմամբ:

Պետք է նշել նաև, որ քննարկման մասնակիցները մեծապես կանորեցին նաև հասարակության հետ տարվող հակակոռուպցիոն իրազեկման աշխատանքները:

Հանրային քննարկման ընթացքում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների կողմից արված բոլոր առաջարկությունները կամփոփվեն և կներկայացվեն ՀՀ արդարադատության նախարարություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Կատարող՝ Նարինե Կարապետյան,Էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճե: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: